

**ԲՅՈՒՉԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ
ԱՄԻՐԴՈՎԼԱԹ ԱՄԱՍԻԱՑՈՒ «ՕԳՈՒՏ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ»
ԵՐԿԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

Բանալի բառեր՝ Միջնադարյան հայ բժշկագիտություն, բժշկագիտական փոխառնչություններ, բյուզանդական բժշկագիտություն, «Օգուտ բժշկութեան», Հիպոկրատես, Օրիբասիոս, Պոլոս Էգինացի, «պերիոդևտ» բժիշկներ:

Գիտամշակութային փոխազդեցությունը, նաև, իհարկե, փոխհարստացումը քաղաքակրթության զարգացման բոլոր ժամանակներում եղել են, կան և կլինեն զարգացման առաջընթացի կարևորագույն խթանիչները: Բացառություն չէր կարող լինել նաև միջնադարյան հայ բժշկագիտությունը, իր բազմակողմանի արտահայտումներով: Այս դիտանկյունից ուշագրավ են միջնադարյան հայ բժշկագիտության, մասնավորապես Ամիրդովլաթ Ամասիացու երկերի առնչությունները Դ-է դարերի բյուզանդական բժշկագիտության հետ:

Արևելահռոմեական կայսրության գիտական կենտրոններում գերակշռող դեր էին խաղում աշխարհիկ գիտությունները: Ուսումնական կենտրոններում դասավանդվում էին եռյակ և քառյակ գիտությունները՝ trivium և quadrivium. առաջինն ընդգրկում էր քերականություն, ճարտասանություն, դիալեկտիկա, երկրորդը՝ թվաբանություն, երաժշտություն, երկրաչափություն, աստղագիտություն, ինչպես նաև բժշկություն, իրավունք և աստվածաբանություն¹: Իսկ եղեսիայի, Կեսարիայի, Մծբինի հանրահայտ բարձրագույն դպրոցներում վաղ միջնադարում ուսուցանվում էին նաև բնական գիտություններ, մասնավորապես՝ քիմիա²:

* Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, բժշկ. գ. թ., հոդվածը ստանալու օրը՝ 29 նոյեմբերի, 2025, հոդվածը գրախոսելու օրը՝ 5 դեկտեմբերի, 2025:

¹ История Византии, под ред. акад. С. Сказкина, Москва, 1967, т. 1, сс. 388-394.

² Н. Пигулевская, Города Ирана в раннем средневековье, Москва-Ленинград, 1956, с. 314. Ի դեպ, միջնադարյան առաջին համալսարաններից մեկում՝ Մծբինի համալսարանում (ե դար) գործում էր բժշկական ուսումնարան, հիշատակելի է այդ համալսարանի «Մծբինի

Գիտության բարեհաջող զարգացմանը նպաստում էր հարուստ գրադարանների առկայությունը, կային նաև գեղագրության (կալիգրաֆիայի) մասնագետներ, որ զբաղված էին ձեռագրերի ընդօրինակությամբ: Նույնիսկ ինքը՝ Թեոդորոս կայսրը, անձամբ զբաղվել է գեղագրությամբ և խրախուսել դրանով զբաղվողներին³: Ուստի այս և հետագա դարերում Կոստանդնուպոլիսը դարձավ Բյուզանդական քաղաքակրթության կենտրոն, ուր գիտությունն ու արվեստն ունեցան իրենց նորագույն, ինքնատիպ հնարավորություններն ու ձևերը: 376 թ. հատուկ հոգված ընդունվեց, որով ուսուցիչներն ազատվում էին հարկեր վճարելուց, իսկ մեծ քաղաքներն իրավունք էին ստանում ընտրելու իրենց ուսուցիչներին⁴:

Բժիշկները հատուկ դիրք ունեին. գործում էր գլխավոր բժշկի պաշտոնը (archiaterus), կային կալսերական (archiatri sacri palatii), քաղաքային (archiatri municipales), պրակտիկ բժիշկներ և բժշկական դպրոցների ղեկավարներ (archiatri scholares)⁵: Ավելին՝ սահմանափակվում էր քաղաքային ինքնավարության մարմիններում բժիշկների պաշտոնավարումը. «... որպեսզի այդ մարդկանց տրվի անհրաժեշտ ազատություն գիտությամբ և արվեստով զբաղվելու, միաժամանակ դասավանդելու համար»⁶: Հետևապես առանց երկմտելու կարելի է արձանագրել Դ-է դարերում բյուզանդական բարձր զարգացման հասած բժշկական մշակույթի իրողությունը, որն իր հետ բերեց բժշկության կարևոր բաղադրիչներից մեկին՝ հիվանդանոցային գործի, կազմակերպումը Փոքր Հայքի խոշոր կենտրոններում:

Վաղ միջնադարում բացված ամենահայտնի հիվանդանոցներից են եղել Սեբաստիա և Կեսարիա քաղաքներում գործող հիվանդանոցները: «Բագիրիաս» անվամբ այդ հիմնարկները փաստորեն ամբողջական հիվանդանոցային թաղամասեր էին՝ վարակիչ, վիրաբուժական և տենդային հիվանդների համար մի շարք առանձնաշենքերով ու մեկուսարաններով, հոսպիտալ մասնաշենքերով,

ակադեմիայի կանոնադրությունը», որի մշակած կանոնները (ստատուտ) մոտ երկու դար մնացին որպես միջնադարյան համալսարանների կանոնադրություն, տե՛ս **Н. Пигулевская**, *Культура сирийцев в средние века*, Москва, 1979, сс. 47-49:

³ *История Византийской империи*, под ред. **Ф. Успенского**, т. 1, С. Петербург, 1912, с. 266.

⁴ *История Византийской империи*, сс. 260-262; 264-265; **З. Г. Самодурова**, «Естественнонаучные знания», *Культура Византии, IV – первая половина VII века*, под ред. **З. В. Удалицовой**, Москва, 1984, сс. 408-431 (*մասնավորապես բժշկության մասին*՝ сс. 425-429); **З. Г. Самодурова**, «Школы и образование», *Культура Византии, IV – первая половина VII века*, сс. 478-503 (*մասնավորապես*՝ сс. 493-503):

⁵ **Н. Пигулевская**, *Культура сирийцев в средние века*, сс. 151-152.

⁶ *История Византийской империи*, с. 265.

որտեղ հիվանդները ստանում էին կլինիկական «ստացիոնար» բուժում⁷: Անկասկած բուժական հիմնարկների այգօրինակ գործունեությունն անհնար էր առանց ձևավորված բժշկական գիտության, որի հիմքը հունահռոմեական բժշկական մշակույթն էր: Դ-է դարերում բյուզանդական բժշկագիտությունը հագեցված էր անտիկ բժշկության մեծերի, մասնավորապես Հիպոկրատեսի և Գալենոսի բժշկագիտական երկերի ծավալուն, բազմահատորանոց մեկնություններով և խմբագրություններով: Անշուշտ, բժշկագիտության զարգացմանը նպաստում էին գործող բժշկական դպրոցները, որտեղ ուսանողները ստանում էին թե՛ տեսական, թե՛ կիրառական բժշկական գիտելիքներ, ինչպես նաև՝ «ընտանեկան բժշկական դպրոցների» գործող ավանդույթը, երբ հարյուրամյակներ շարունակ բժշկական փորձն ու գիտելիքները փոխանցվում էին սերնդից սերունդ⁸:

Այսպիսով, անտիկ շրջանի ինչպես ընտանեկան, այնպես էլ կիրառական բժշկության ասպարեզում հիպոկրատյան և այլոց բնագիտական, բժշկագիտական մեծագույն կուտակումների ավանդույթներն անցան բյուզանդական բժշկագիտությանը՝ ստեղծելով արդեն ուրույն բյուզանդական բժշկագիտական դպրոցներ⁹:

Վաղ միջնադարից սկսած մեծ է բյուզանդական քաղաքակրթության ազդեցությունը հայ միջնադարյան գիտության և մշակույթի, մասնավորապես՝ բժշկության և բնագիտության զարգացման վրա: Այս իրողությունը տրամաբանական է, քանզի Փոքր Հայքը՝ Հայաստանում Հռոմեական կայսրության և Պարսկաստանի միջև մղվող երկարատև պատերազմների և դրան ուղեկցող հայերի զանգվածային գաղթի հետևանքով ուներ հոծ հայ բնակչություն, որն էլ ավելի ստվարացավ արաբական տիրապետության ընթացքում: ԺԱ դարում ի հետևանք թուրք-սելջուկյան ասպատակությունների, հայերը դարձյալ զանգվածաբար գաղթեցին Բյուզանդական կայսրության նահանգներ: Փաստորեն, Վասպուրականի գաղթից հետո (1021 թ.) Փոքր Հայքը հայկական էր ոչ միայն ազգային կազմով, այլև պետական-քաղաքական և կրոնական ու մշակութային

⁷ G. B. Ferngren, *Medicine and Health Care in Early Cristianity*, Baltimore, 2016, p. 124; Т. Мейер-Штейнер и К. Зудгоф, *История медицины*, пер. со 2-го немецкого изд., Москва, 1925, с. 149.

⁸ Անտիկ բժշկության մեջ ահռելի ներդրում ունի «հիպոկրատյան բժշկական ընտանեկան դպրոցը», որի արմատները տանում են վաղնջական ժամանակներ: Ինքը՝ Մեծն Հիպոկրատեսը, համարվում է իր բժշկական ընտանիքի 17-րդ սերունդը, որի առաջին ուսուցիչը եղել է հայրը՝ բժիշկ Հեռակլիտոսը: Բժիշկներ են եղել նաև նրա մայրը, որդիները, փեսան՝ Պոլիբիոսը (տե՛ս С. Ковнер, *Очерки истории медицины, Гиппократ*, вып. II, Киев, 1883, сс. 196-199): Հիպոկրատյան բժշկական ընտանեկան դպրոցի ամենամեծ նվաճումը եղավ «Հիպոկրատյան հավաքածուն»՝ *Corpus Hippocraticum* (Гиппократ, *Избранные книги*, пер. с. греч. В. Руднева, Москва, 1936, ч. I, с. 47):

⁹ Н. Пигулевская, *Культура сирийцев в средние века*, с. 151.

նկարագրով¹⁰: Ըստ ֆրանսիացի պատմաբան Ժոզեֆ Լորանի. «11-րդ դարում հայերը գրավում էին Բյուզանդական կայսրության արևելյան նահանգները, կազմում գրեթե ողջ բնակչությունը, հատկապես Տավրոսը, Մելիտինեն, Սեբաստիան, Կապադովկյան Կեսարիան, Տարսոսը... Միջին դարերում նրանք դարձան այս երկրի բացարձակ տերը, որ հետևանք էր շարունակվող անընդհատ գաղթի»¹¹: Այսպիսով, Փոքր Հայքը՝ շարունակելով մնալ Բյուզանդական կայսրության մեջ, դարձավ հայ մշակույթի ու գիտության զարգացման մի ինքնատիպ օջախ: Ավելին՝ Ժ-ԺԱ դարերում Բյուզանդական կայսրության պատմությունը իրականում վերածվել էր հայերի պատմության: Ըստ Սթիվեն Ռանսիմանի՝ «11-րդ դարում հայերն էին ղեկավարում պետությունն ու եկեղեցին, նրանք էին պաշտպանում երկիրը, տալով զինվորներ և զորապետներ, հայերը մեծ ազդեցություն ունեին նաև գիտության և արվեստի վրա»¹²: Վերոասվածի հավաստումներից են միջնադարյան հայ մատենագրության բացառիկ անհատականություններից՝ բյուզանդական բարձր կրթություն ստացած իմաստասեր, ուսուցչապետ Գրիգոր Մագիստրոս Պահլավունու բանավեճերը բյուզանդացի գիտնականների հետ Կոստանդնուպոլսի Ս. Սոփիայի տաճարում՝ գիտական ամենահրատապ ու կնճռոտ հարցերի շուրջ¹³, որոնց ընթացքում Գրիգորն իր «անպարտելի» տրամաբանությամբ և «քաջակիրթ» իմացությամբ զարմացնում էր ներկաներին¹⁴:

Հետագա դարերում նույնպես, Բյուզանդական կայսրության հայաշատ կենտրոնները շարունակում էին պահպանել իրենց ազգային ու մշակութային առանձնահատկությունները մինչև ԺԵ դար, երբ 1453 թ. Ֆաթիհ Մուհամատ II սուլթանը գրավում է Բյուզանդական երբեմնի հզոր կայսրության մայրաքաղաք Կոստանդնուպոլիսը: Այսուհանդերձ պատմաքաղաքական այս վայրիվերումները չկարողացան խաթարել հայ գիտության, ինչպես նաև հայ բժշկագիտության շարունակական զարգացման գործընթացը նախկին կայսրության հայաշատ կենտրոններում, մասնավորապես՝ մայրաքաղաքում, որտեղ դեռ զգալի էր եր-

¹⁰ Վ. Վարդանյան, Վասպուրականի և Արծրունյաց թագավորությունը, Երևան, 1969, էջ 239:

¹¹ J. Laurent, *Byzance et les Turcs seldjoucides dans l'Asie occidentale jusqu'en 1081*, Paris, 1914, pp. 4-6, 67.

¹² S. Runciman, *Byzantine Civilisation*, London, 1933, pp. 181-182.

¹³ «Նաև Գրիգոր Պանկատունին՝ որդին Վասակայ Էր անպարտելի շնորհով լցեալ և զարմանալի էր սա յամենայն պատասխանիսն ընդդէմ Հոռոմոց, այր քաջակիրք և ամենայն հմտութեանց հետեւեալ և բովանդակ հասեալ սորա ի վերայ հին և նոր կտակաւրանացն Աստուծոյ. և սա ի յամբիոնսն նստել ընդ իմաստասէրն ի մէջ սրբոյն Սոփեայ և խօսել ընդ վարդապետացն Հոռոմոց, և ի կարգի վարդապետացն էր սա ազգիս Հայոց», տե՛ս Մատթէոս Ուռնայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 183: Հմմտ. նաև Մատթէոս Ուռնայեցի, Ժամանակագրութիւն, քաղգ. Հ. Բարթիկյանի, Երևան, 1973, էջ 121:

¹⁴ Լ. Խաչերեան, Գրիգոր Պահլավունի Մագիստրոս, Կոս Անճելըս, 1987, էջ 259:

բեմնի հզոր Բյուզանդական քաղաքակրթության ազդեցությունը բազմազգ գիտա-մշակութային կյանքում: Եվ տրամաբանական է, որ այս ժամանակաշրջանում Կոստանդնուպոլսում ապրող և ստեղծագործող ամասիահայ բժշկապետ Ամիրդովլաթ Ամասիացին պետք է ներշնչված լիներ բյուզանդական բժշկական մշակույթով և կրեր նրա ազդեցությունը:

Այս իրողությունն առավել քան ակնառու է նրա «Օգուտ բժշկութեան» երկասիրության մեջ, որն անվերապահորեն կարելի է համարել ընդհանուր միջնադարյան բժշկության մի յուրօրինակ սինթեզ, ուր խաչաձևվում են բյուզանդական և արաբական բժշկագիտության նվաճումները:

Արդ՝ ներկայացնենք մեր դիտարկումները Ամիրդովլաթի «Օգուտ բժշկութեան» երկում բյուզանդական բժշկության արձագանքների վերաբերյալ:

Նախ փաստենք, որ բյուզանդացի բժիշկները եղան ոչ միայն հունահռոմեական բժշկության շարունակողները, այլև փոխանցողները միջնադարյան արաբական բժշկագիտությանը՝ կամրջի դեր կատարելով անտիկ և արաբական բժշկական մշակույթների միջև, որոնց խաչասերումը խթան հանդիսացավ բժշկագիտության զարգացման համար: Բյուզանդացի բժիշկների այս առաքելությունն իրականություն դարձավ նրանց արժեքավոր բժշկագիտական ստեղծագործությունների շնորհիվ, այդ թվում՝ Դ դարի հույն բժիշկ Օրիբասիոսի *Collecta medicinalia*-ի¹⁵, 2 դարի բժիշկ Աեցիոս Ամիդացու «Տասնվեց գիրք բժշկության մասին» հանրագիտարանի¹⁶, Ալեքսանդր Տրալացու (2 դար) «Տասներկու գիրք բժշկության մասին» (*Libri doudecim de arte medica*)¹⁷ մասնավոր ախտաբանության և թերապիայի հարցերը քննող գրքերի, է դարի բյուզանդացի բժիշկ Պողոս Էգինացու կանացի հիվանդություններին (մանկաբարձություն և գինեկոլոգիա) և վիրաբուժությանը նվիրված, յոթ գրքից բաղկացած *Compendii medici libri septem*¹⁸ բժշկական հավաքածուի. դրանք հիմնականում խմբագրա-

¹⁵ Օրիբասիոս (Oribasius, 325-403)՝ հեղինակ 70 գրքից բաղկացած «Բժշկական հավաքածու»-ի (*Collecta medicinalia*) հանրագիտարանի: Տե՛ս **С. Ковнер**, *История средневековой медицины*, Киев, 1893, сс. 22-36; **D. Campbell**, *Arabian Medicine and its Influence on the Middle Ages*, v. I, London, 1926, pp. 10-11:

¹⁶ Աեցիոս Ամիդացի (Aëtius Amidenus, 502-575)՝ հեղինակ բժշկության տարբեր ոլորտներին վերաբերող 16-հատորանոց համահավաք ժողովածուի՝ *Tetrabiblia*, յուրաքանչյուրում 4 գիրք: Տե՛ս **С. Ковнер**, *История средневековой медицины*, сс. 22-36; **D. Campbell**, *op. cit.*, p. 11; **Абу Райхан Беруни**, *Фармакогнозия*, сс. 75-76:

¹⁷ Ալեքսանդր Տրալացի (Alexander Trallianus, 525-605 թթ.)՝ հեղինակ 12-հատորանոց «Բժշկական հավաքածու»-ի, որում ամփոփված են բժշկության գրեթե բոլոր ոլորտները (**С. Ковнер**, *История средневековой медицины*, сс. 58-60, 110-111):

¹⁸ Պողոս Էգինացի (Paulus Aegineta, 615-690 թթ.)՝ հույն հանրահայտ պերիոդկա բժիշկ, վիրաբույժ, մանկաբարձ: Հեղինակ 2 բժշկական ստեղծագործության, որոնցից մեկը՝ կանացի հիվանդություններին նվիրված տրակտատը և երկրորդը՝ 7 գրքից բաղկացած բժշկավիրա-

կան-մեկնողական բնույթի բազմահատորանց ժողովածուներ էին՝ քաղված հիպոկրատյան Corpus Hippocraticum և Գալենոսի Opera vera հավաքածուներից¹⁹:

Միջնադարյան հայ բժիշկների գործերում, մասնավորապես Ամիրդովլաթ բժշկապետի բժշկարաններում որպես անկապտելի մաս ներառվել են բյուզանդացի բժիշկների երկերում առկա կիրառական նշանակություն ունեցող ավելի քան արժեքավոր վերլուծություններ ու պատկերացումներ՝ ըստ անտիկ բժշկության հիպոկրատյան, գալենյան բժշկագիտական դասակարգումների: Փաստորեն Ամիրդովլաթն անտիկ բժշկագիտության պատկերացումների հետ աղերսների զգալի մասի համար պարտական է բյուզանդական միջնորդությանը:

Մեր դիտարկմամբ՝ բյուզանդացի բժիշկների գրքերից Ամիրդովլաթի մեջբերումները ոչ թե սոսկ ընդհանուր աղբյուրներից եկող փոխառություններ են, այլ արդյունք են միասնական ավանդույթների հետևողական և բնականոն զարգացման՝ ավելի ազատ և ինքնուրույն, հագեցված հեղինակի դիտարկումներով ու գաղափարներով:

Դրանով հանդերձ, Ամիրդովլաթը, գիտնական բժշկի բարեխղճությամբ, որպես կանոն վկայակոչում է իր օգտագործած գրավոր աղբյուրների հեղինակների անունները: Ահա նրա վկայություն-հիշատակարանը. «... եւ այլ իմացիր, եղբայր, որ գիրքս մեր խօսքն չէ. առաջին իմաստասիրացն և բժշկական իմաստասիրացն և վերջին փիլիսոփայիցն, և այս ամէն բժշկացն խօսքն է, որ է՝ Բագարատն և Գեղիանոսն, և Արեհնանիսն և Ֆլուսն, և Արպիաստուն և Ընուֆօսն, և Դէվնանիսն և Մարնուն, և Յեսուն և Մուսավայի որդին, և Ապուհարեհն և Մասեհն, և Մահամմատ Զաֆարիային որդին և Սապիթ Կուտանն, և Հունանն և Իսաղն և Սինայի որդին և այլ բազում ժողովուրդ, որ ի այս արուեստս շատ աշխատել են: Մենք սոցայ զգիրքն ընտրել ենք և գրել շատ աշխատանամք և յայսմն հետէ գրեցի շատ աշխատանոք զայս ձեռամբ իմով»²⁰ – «... և իմացիր եղբայր, որ այս գիրքը մեր խոսքը չէ, այլ՝ հին իմաստունների և իմաստուն բժիշկների և վերջին փիլիսոփաների, և սա բոլոր բժիշկների խոսքն է՝ այսինքն՝ Հիպոկրատեսի և Գալենոսի, և Արիստոֆանեսի, և Պոդոսի, և Օրիբասիոսի և Ռուֆուսի, և Դիոգենեսի, և Մասարզվելի, և Իբն Հեսուի, և Մասուվայի որդու, և Ապուհարեհի, և Իբն Մասիհի, և ար-Ռազիի, և Սաբիթ իբն Կուրրայի (Սապիթ բեն Կորրահի), և Հունայն բեն Իսահակի, և իբն Սինայի, և շատ ուրիշների, որ այս արհեստի մեջ շատ են աշխատել: Մենք սրանց գրքերն

բուժական «կոմպենդի» հավաքածու «Compendii medici libri septem» վերառությամբ (С. Ковнер, сс. 117-140; Абу Райхан Беруни, т. IV, с. 76; D. Campbell, v. 1, pp. 11-12):

¹⁹ D. Campbell, op. cit., pp. 10-12:

²⁰ ՄՄ 414, ք. 220ա:

ընտրել և գրել ենք՝ մեծ ջանք թափելով, և դրանից հետո մեծ ճիգ գործելով գրեցի իմ սեփական ձեռքով»²¹:

Այս վկայությունը մեր ուշադրությունը գրավեց երկու առումով: Նախ՝ հատկանշական է, որ Ամիրդովլաթը հիշատակում է բյուզանդական հեղինակներին անուններ, որոնց գաղափարների ազդեցությանն անդրադառնալու ենք ստորև, ինչպես նաև անտիկ շրջանի իմաստասերների անուններ, որպես իր կիրառական բժշկական մտահղացումների աղբյուրներ: Եվ չնայած Ամիրդովլաթը վկայում է, որ ինքն օժտված է եղել այլ լեզուների (կարելի է ենթադրել՝ նաև հունարենի) իմացությամբ, բայց արդյո՞ք նրա տրամադրության տակ եղել են անտիկ իմաստասերներ Հիպոկրատեսի, Գալենոսի և այլոց բնագրերը: Հավանաբար ոչ, և ենթադրելի է, որ այդ վկայությունները միջնորդավորված են բյուզանդական բժշկագիտական աղբյուրներից, ինչի հիմնավորումը հետագա բնագրագիտական քննություն է պահանջում:

Օրիբասիոս

Ինչ վերաբերում է բյուզանդական աղբյուրների հիշատակումներին, անդրադառնանք «Օգուտ բժշկութեան» երկասիրության մեջ ամենավաղ հեղինակի՝ Դ դարի բյուզանդացի բժիշկ Օրիբասիոսի («Արպիասուտ»-ի) անվան վկայակոչումներին: Խնդրո առարկա երկասիրության մեջ այդ հեղինակի անունը հիշվում է թե՛ հիվանդությունների ախտաձագման, թե՛ պաթոգենեզի, թե՛ թերապիայի բաժիններում:

Բերենք մի քանի օրինակ²².

Բժշկարանի՝ միջկողային տարածության ուռուցքին (Empyema necessitatis) վերաբերող «ՃԼ»՝ «Պարսամ, որ է շավշան արապ լեզուալ» գլխում, հիվանդության ախտաձագմումը Ամիրդովլաթը ներկայացնում է միջնադարյան բժշկագիտության մեջ շրջանառվող հիպոկրատյան հեղահյութային (արին, լորձ, սև և դեղին մաղձ) ախտաբանության տեսանկյունից, այն հիմնավորելով ըստ Օրիբասիոսի վկայության. «Պատճառ որ տալէ. Արպիասուտն ասէ, թէ արեան և թէ սաֆրայի աւելուածուն լինի, Բ. իրար խառնի և իջնու ի կողերուն միսն,

²¹ Մեջբերումների այս և հաջորդ թարգմանությունները մերն են:

²² Այստեղ և ստորև մեջբերումները ներկայացվել են ըստ մեր աշխատասիրությամբ հրատարակության պատրաստ Ամիրդովլաթ Ամասիացու «Օգուտ բժշկութեան» երկասիրության Մատենադարանում առկա ինը ձեռագիր բժշկարանների (ՄՄ 7752, ՄՄ 5847, ՄՄ 453, ՄՄ 6275, ՄՄ 9837, ՄՄ 9844, ՄՄ 7731, ՄՄ 10288, ՄՄ 8052) ընդօրինակությունների ֆնանհամեմատական բնագրի: Մինչ այժմ մատչելի է միայն խնդրո առարկա երկի՝ Բունիաթ Սեբաստացու 1626 թ. խմբագրության Ստեփան Մալխասյանցի հրատարակությունը՝ Ամիրդովլաթ Ամասիացի, *Օգուտ բժշկության*, Երևան, 1940:

այս լինի ի կողմ որպէս ուտեց մն»²³ – «Օրիբասիոսն ասում է՝ եթե պատճառը տաքությունից է, լինում, դա լինում է թե՛ արշան, թե՛ դեղին մազձի ավելցուկից, երկունս իրար են խառնվում և իջնում դեպի կողերի փափուկ հյուսվածքները, և այսպէս կողի մեջ գոյանում է ուռուցքի նման մի բան»:

Բժշկարանի՝ «ՃԾԳ»՝ «Բարակ քար և աւազն որ ի երիկամն ընծայի մարդուն» գլխում Ամիրգովլաթը երիկամաքարային հիվանդութեան ախտաձագումը, կրկին Օրիբասիոսի վկայութեամբ, ներկայացնում է ըստ հիպոկրատյան հեղահյութային ախտաբանութեան տեսութեան. «Արափաստուն ասէ, թէ խառնուածոց և է հում, որ երիկամն տառութիւն զինքն լինի, չորցուցեր և քինա դարձեր»²⁴ – «Օրիբասիոսն ասում է՝ եթե հում խառնվածքից է, երբ երիկամն ինքը տաք է լինում, չորանում և քինածառի [կեղևի պէս կարծր] է դառնում»:

Ու նորից, բժշկարանի՝ «Կոծիծ որ է սլուլն և մուտի որ տաճիկն հասպայ ասէ» գլխում, Ամիրգովլաթը՝ վկայակոչելով Օրիբասիոսի մեկնաբանումը մաշկի վրա առաջացած կոշտուկների (գորտնուկ) ախտաձագման մասին, մեկնում է ըստ նույն հիպոկրատյան հեղահյութային ախտաբանութեան տեսութեան. «Արափաստուն ասէ, թէ աղի պալղամէ լինի, որ թանձր լազիքն բնութիւն ի կաշուն դրսի դիմն ուղարկէ կամ սաւտայ լինի»²⁵ – «Օրիբասիոսն ասում է, թե աղի լորձից է լինում, երբ թանձր մածուցիկ բնութեանն ուղարկում է դեպի մաշկի արտաքին մակերևութ, կամ սև մազձից է լինում»:

Արդյո՞ք մեջբերված բնագրային հատվածները մեր այն դրույթի ստույգ հավաստումները չեն, որ շատ դեպքերում բյուզանդական բժշկագիտությունը միջնորդավորված դեր է ստանձնել Ամիրգովլաթին ուղղորդելու դեպի անտիկ հիպոկրատյան բժշկագիտությունը, մեր հեղինակին դարձնելով անտիկ բժշկագիտության տեսակետների կրողը:

Շատ ավելի ընդարձակ են ախտահարումների բուժման, ըստ Ամիրգովլաթի՝ «ստածման» բաժնում հղումներն Օրիբասիոսին, որոնք մեր ուշագրությունը գրավեցին նաև աղբյուրագիտական արժեւորման տեսանկյունից:

Բժշկարանի «ԽԳ» գլխում, ուր շարադրված են քնած ժամանակ մարդու մոտ եղած մղձավանջների բուժման եղանակները, կա մի ընդարձակ մեջբերում Օրիբասիոսից. «Արափաստուն ասէ, տուր ապիկիս արկանէլ ի ջղերուն, ի շատ ուտելու, գինոյ և տաֆ իրաց և չոր պահէ գէգ: Բ. նուռ, ազոխի շարապ տուր, լուծէ փորն թմրեմդով, դամոնի չիրով, յետոյ նուլապով տուր սամդալ, վարդի ձէթ և ջուր օժէ ի հակատն: Քաֆուր, մանուշակ, նոնոֆաւ հոտայ, ստամոքն գորացնէ խնձորի շարապով և նոսն, որ պիղձ պոխսարն ի գլուխն չելնէ, և

²³ ՄՄ 7752, ք. 71ա:

²⁴ ՄՄ 7752, ք. 93բ:

²⁵ Նույն տեղում, ք. 113բ:

տուր ազոխի աղտորի ապուր»²⁶ – «Օրիբասիուսն ասում է՝ ջղերի վրա բուժապուլիկ դիր (բանկա գցիր), շատ ուտելուց, գինուց և չոր բաներից (կերակուրից) քեզ հեռու պահիր: Երկրորդ՝ նուռ, խակ խաղողի օշարակ տուր, փորլուծություն առաջացրու հնդկարմավով, դամոն սալորի չրով (աճալ), հետո վարդաջրով սանտալ տուր, վարդի յուղ և ջուր քսիր ճակատին. քափուր [և] մանուշակ թող հոտոտի: Ստամոքսն թող ամրացնի խնձորի և նռան օշարակով, որպեսզի «պիղծ» (ախտահարված) գոլորշին չբարձրանա դեպի գլուխը, և տուր խակ խաղողով և աղտորով (սոսմախով) ապուր]»:

Կիրառական բժշկության՝ թերապիային վերաբերող մեկ այլ հղում է Ամիրգովլաթի բժշկարանի «Ձե»՝ «Ակուացաուլթին որ ի տաքէ կամ հովէ լինի» գլխում առկա ատամնացապուլթյան բուժմանը վերաբերող հետևյալ հատվածը. «Արպիասուսն ասէ, թէ այս պիղծ և տաֆ խառնուածոց լինի՝ ուտեցն ի ակուատակերն և տաֆ խլտերն վաթի ակոայի նդերուն տակն և զակոան ցաւեցնէ», «Արպիասուսն ասէ՝ կիֆալէն երակ առ, ապիկիս [արկ], սիստան ջուր արկ ի բերանն, ֆաֆուր, վարդէջուր իրար խառնէ, բերանն առնու. մագտաֆ Ա. նուկի, վարդի ձիթով շաղվէ, հալէ, և բերանն առնու, և քիչ մի ակրկարհա ֆաֆուր աֆիոնով տորէ և քիչ մի բամպկով դրջէ և ակուատկերն դնէ, թէ այսով շաջի՝ լան այն է, որ ակուատկերն նդէս, լուծում առնես մրգաջրով, տաֆ իրֆ մի տար, թթունի կեր, առ քիչ մն աֆիոն, վարդի ձիթով հալէ, ականջն կաթեցուր, պաննին հոսնում ծխէ, աղով և ֆացխով մամատ արէ, գլուխն [յ]ստակի, որ ցան խաղողի»²⁷ – «Օրիբասիուսն ասում է, որ այս «պիղծ» և տաք խառնվածքից առաջանում է լնդերի այտուց, և տաք հեղահյութերը հոսում են ատամի արմատների տակ և ցավեցնում են ատամը», «Օրիբասիուսն ասում է՝ կեֆալիկ երակից արյուն վերցրու, բուժապուլիկ դիր, բերանը սիսեռի ջուր լցրու: Քափուր [և] վարդաջուր իրար խառնիր, [և] թող բերանն առնի: Մեկ նուկի հերձու խեժը վարդի յուղով շաղախիր, հալեցրու և թող բերանն առնի: Մի քիչ վայրի թարխունի արմատ [և] քափուր խաշխաշով տորիր, բամբակը մի քիչ թրջիր և դիր լնդերին: Թե սրանով չհաջողվի, լավ կլինի, որ լնդերը ճեղքես և [արտադրուկը] լուծես մրգաջրով: Տաք կերակուր մի տուր, թթու ուտելիքներ թող ուտի: Վերցրու մի քիչ սև խաշխաշ, վարդի յուղով հալիր և կաթեցրու ականջը: Բանգի սերմ ծխեցրու, աղով և քացախով ծեփոն արա (քսուք դիր)՝ գլուխը մաքրվի, որպեսզի ցավն հանդարտվի»:

Ներկայացնենք ևս մի ուշագրավ հատված, որը վերաբերում է սեռական անկարողության (իմպոտենցիայի) բուժմանը՝ կրկին Օրիբասիոսի վկայակոչմամբ. «Արպիասուսն, թէ պաղղամէ լինի, տուր կուլանկու, տաֆ ջուր, կերակուր՝ հալ-

²⁶ Նույն տեղում, ք. 38ա:

²⁷ Նույն տեղում, ք. 59բ:

ձագ և աղանոյ միս խորված և ղալիա արած, հանապազ օձէ արանֆն յիսմիկի ձէթ ձվեռն, թէ պատճառն ավելի գիճութենէ լինի, բնութիւն աւելնայ, տուր սրֆննային, պզուրի և աւազան արէ, պաննակ օշի միս, մութաննանայ»²⁸

– «Օրիբասիոսն ասում է՝ եթե լորձից է, տուր վարդի մուրաբա [և] տաք ջուր: [Որպես] կերակուր [տուր] խորոված կամ բանջարեղենով տապակած հավի ճուտ և աղավնու միս: Ամորձիների արանքն անընդհատ օձիր հասմիկի յուղով: Եթե պատճառը բնության [խառնվածքում] առկա խոնավության ավելցուկից է, սերմերով (պզուրի) պատրաստված մեղրի և քացախի խառնուրդ տուր, և թող ավազան նստի: Թող ուտի շոգեխաշած եղնիկի միս»:

Ամիրգովլաթի բժշկարանում կան Օրիբասիոսի վկայակոչմամբ նաև կիրառական բժշկության ոլորտից՝ թոքային, միզասեռական, երիկամային համակարգերին և այլ ախտահարումներին վերաբերող հատվածներ:

Այս քաղումները ոչ միայն վերաբերում են միջնադարյան կիրառական բժշկությանը, այլև հավակնում են դառնալ դեռևս անհայտ հնագույն բժշկական գրավոր աղբյուրների վկայություններ: Պարզաբանենք. ճիշտ է Օրիբասիոսը բժշկագիտությանը հայտնի է իր 70 գրքից կազմված «Հավաքածու»-ով, այսուհանդերձ այս հավաքածուի մի շարք հատորներ կորսված են համարվում: Եվ կարելի է ենթադրել, որ հենց մեր հեղինակի՝ Ամասիացի բժշկապետի Օրիբասիոսի անունով վերոնշյալ քաղումների շնորհիվ կարող են վերականգնվել այդ կորսված բնագրերից կիրառական բժշկագիտությանը վերաբերող առանձին գրվագներ: Մեր այս ենթադրությունն անշուշտ մանրակրկիտ աղբյուրագիտական քննություն է պահանջում: Այս առումով հայ միջնադարյան բժշկագիտական երկերի ուսումնասիրությունը բացահայտում է ոչ միակողմանի, այլ արդյունավետ փոխհարստացնող առնչություններ:

Պողոս Էգիմացի

Մենք առանձնապես կարևորում ենք է դարի այս բյուզանդացի գիտնական բժշկից Ամիրգովլաթի բժշկարանում առկա մեջբերումները, ոչ միայն այն պատճառով, որ դրանք երեք տասնյակից ավել են, այլև՝ որովհետև դրանցում առավել առարկայորեն են արտահայտված մեր հեղինակի և բյուզանդական բժշկագիտության առնչությունները:

Կարևոր է, որ Էգիմացուց քաղված՝ հիվանդությունների ախտածագմանը, ախտանիշագիտությանն ու թերապիային վերաբերող այս հատվածները հիմնականում կիրառական բժշկության ոլորտից են: Եթե հիշենք, թե ինչպիսի նշանակություն են ունեցել Պողոս Էգիմացու բժշկագիտական աշխատությունները հարյուրամյակներ հետո Արևմտյան Եվրոպայում (դրանք անգամ դասավանդվել

²⁸ Նույն տեղում, ք. 98բ:

են եվրոպական համալսարանների բժշկական ֆակուլտետներում որպես կիրառական բժշկության ուղեցույցներ), նաև եթե հիշենք, որ Ամիրգովլաթ բժշկապետը ոչ միայն անգերագնահատելի մատենագրական ժառանգության հեղինակ է, այլև եղել է փորձառու պրակտիկ բժիշկ և զբաղվել կիրառական բժշկությամբ, ավելին՝ եղել է «պերիոդեստ» («շրջիկ» բժիշկ), ապա հասկանալի կլինի մեր բժշկապետի ընդգծված հետաքրքրությունը էգինացու դրույթների հանդեպ:

Բժշկագիտական բնույթի այլ քննության առարկա է, թե ինչ ուղիներով են էգինացու բժշկագիտական դրույթները դարեր հետո հասել Ամիրգովլաթին (նա Պողոսին անվանում է Ֆլուս/Ֆլոս/Ֆլոս և Ֆոլոս/Ֆոլոս) և ինչպես են դրանք ազդել նրա բժշկագիտական հայացքների ձևավորման և բժշկական առօրյայի վրա: Մեր կարծիքով՝ դրանք Ամիրգովլաթին են հասել բյուզանդական բժշկագիտության շարունակականությունը, ինչու չէ՞ նաև զարգացումն ապահովող արաբական բժշկության, մասնավորապես՝ հունարենից արաբերեն թարգմանությունների շնորհիվ: Այս դեպքում ավելորդ չէ նշելը, որ երեքդարյա ընդհատումից հետո բյուզանդական բժշկագիտությունն իր կիրառական շարունակությունը գտավ արաբական բժշկագիտության մեջ ի դեմս իմաստասերներ Հունայն իբն Իսահակի, Ար-Ռազիի և Իհարկե՝ միջնադարի հանրագետ մտածող Իբն Սինայի:

Ամիրգովլաթի բժշկագիտական ընկալումների վրա Պողոս էգինացու ազդեցությունը լուսաբանենք մի քանի հատված մեջբերելով: Դրանք վերաբերում են հիվանդությունների թե՛ ախտածագման, թե՛ ախտանիշագիտության և թե՛ թերապիայի հարցադրումներին: Հավաստումը՝ բժշկարանի տեսողական օրգանի ախտահարումները դիտարկող «Որոյ աշաց լոյսն վատուծի և տաքութենէ կամ ի հովութենէ լինի» գլխում:

Ախտածագում (ըստ Ամիրգովլաթի՝ պատճառ). «Պատճառ, որ ի տաֆէ. Ֆլոսն ասէ, թէ լինի սաֆրային սրութենէ, որ աշաց ջղերն յաւեցեր է կամ աւելի չորութենէ լինի, որ ի ժիր տաֆ բռնէ և գիշերն բուն շինա կամ շատ դատի» – «Եթե պատճառը տաքությունից է, Պողոսն ասում է, որ դա լինում է դեղին մաղձի սրությունից, որ լցվում է աչքի նյարդերի վրա, և կամ չորության ավելացուկից, երբ արագորեն ջերմություն է առաջանում, կամ անքնություն է լինում կամ գերհոգնածություն»:

Ախտանիշագիտություն (նշան). «Նշան որ ի տաֆէ. որ սաֆրայէ լինի, որ թթու լինի և կերած աղէկ լինի, աչն այն, որ ի չորութենէ լինի, որ կէսօրն լինա՝ փոսնա, աչն պնտի պնտի խիստ լինի» – «Տաքից առաջացած նշանը, երբ դեղին մաղձից է լինում, [այն է], որ թթու է և լավ է մարսում: Այն աչքը որ չորությունից է [վնասվել], կեսօրին փոս է ընկնում և հաճախակի թարթում է»:

Թերապիա (ստածում՝ բուժում). «Ստածումն, որ ի տաֆէ լինի, Ֆլոսն ասէ, թէ տաֆ լինա սրֆնային տաս անօթից, Բ. նուան ջուր և գաւու թեփն լվա, նշա և շաֆար, զինչ որ հով իրֆ կայ, օգտէ: Յամենայն պաղ ձիթերն, աղջիկ մօր

կաթն կաթեցուր, յամենայն տա՛մ և սուր իրացէ՛ պատրաստէ, և թթվշաղ իրվի ուտէ, և ամենայն հոյ՛ւ և գէն իրք ուտէ, գինիմ ջրախառն, որ ըղեղն գիշացնէ, մանուշակի և դդմի, նշի ձեթ օծէ գլուխի, տա՛մ և չոր մի ուտեր»²⁹ – «Տաքից առաջացած [հիվանդութեան] բուժումը. Պողոսն ասում է, եթե տաք է՝ քաղցած վիճակում քացախի օշարակ տուր: Երկրորդ՝ (երկու °) նուան հյութ, նաև գարու թեփը լվա, ցորենի օսլա և շաքար [տուր]: Ինչ սառը բան կա՝ [տուր], օգնում է: Ամեն տեսակի սառը յուղեր, աղջիկ երեխայի մոր կաթը կաթացրու, բոլոր տաք և սուր բաներից զգուշացիր և թող թթվաշ կերակուր ուտի, ամեն տեսակի սառը և խոնավ բաներ ուտի: Գինին ջրախառն [տուր], որպեսզի ուղեղը խոնավեցնի: Գլուխն օծիր մանուշակի, դդմի և նշի յուղերով: Տաք և չոր կերակուր թող չուտի»:

Նույն փաստարկը հիմնավորող մեկ այլ դիտարկում: Բժշկարանի «Երկրկամացաւութիւն ի տաքէ և հովէ լինա» գլխում առկա է այս ախտահարման այսօրվա բժշկագիտական ընկալումներին արձագանքող, երկկամաբորբի՝ կրկին և՛ ախտածագմանը, և՛ կլինիկային, և՛ թերապիային վերաբերող էփինացու անվամբ հիշատակումը.

Ախտածագում (պատճառ). «Պատճառ ի հովէ. Ֆլօսն ասէ, թէ հովութենէ լինի պաղաւմի, որ կերակրոց որ հով է և շատ ուտէ, և սալտայի խառնուածոց, որ բնութիւն աւիրեր է և պիղծ է արեր» – «Սառնութեանից առաջացած պատճառի մասին Պողոսն ասում է, թե լորձի սառնութեանից է լինում, որն առաջանում է առատորեն կերած սառը կերակուրներից, նաև լինում է սև մաղձային խառնվածքից, որն ավերել է [մարմնի] բնութեանը և վատն է դարձրել»:

Ախտանիշագիտություն (նշան). «Նշան ի հովէ. Ֆլօսն ասէ, պաղաւմէ լինի այն է, որ գոգն կարմիր լինա և ծարաւ չլինա և ցամալ խիստ չլինա, և այն, որ սաւտայէ է, գոգն մթնգուն է և ցամալ խիստ» – «Պողոսն ասում է՝ լորձից առաջացած սառնութեան նշանն այն է, որ մեզը կարմիր է լինում, ծարավի զգացում չի ունենում և ցամալն էլ սաստիկ չի լինում: Իսկ այն, որ սև մաղձից է՝ մեզը մուգ է և ցամալն էլ սաստիկ»:

Թերապիա (ստածում). «Ստածումն, որ ի հովէ լինի. Ֆլօսն ասէ, թէ պաղաւմէ լինա. դեղն այն է, որ անօթից տաս կուլանկու տա՛մ ջրով և տա՛մ կերակուր տաս, որպէս կաղին, սպստան, զանճապիլ, ֆօստայ և որ նման է սոցա, և փորն օծէ եասամենի ձիթով կամ դալիաով, և տուր միս դալիաով և գերպա, թէ ասով չաջի, տուր տավայի մուշք և մուֆառէն»³⁰ – «Սառնութեանից [առաջացած հիվանդութեան] բուժման մասին Պողոսն ասում է՝ եթե լորձից է, դեղն այն է, որ քաղցած վիճակում վարդի մուրաբա տաս՝ տաք ջրով, և տաք կերակուր տաս, ինչպես կաղինը, ցորցը (շան պտուկը), կոճապղպեղը, զմախտակը, և

²⁹ Նույն տեղում, թ. 52ա:

³⁰ Նույն տեղում, թ. 92ա:

դրանց նման բաներ: Եվ փորն օծիր յասամանի յուղով կամ մուշկից, համպարից ու քափուրից՝ պանի յուղով պատրաստված օծանելիքով(ղալիա): Տապակած միս տուր՝ բանջարեղենով (ղալիա) և ապուր՝ մսով ու բանջարեղենով (զիր-պաճ): Եթե սրանով չհաջողվի, տուր մշկայծյամի մուշկ և կազդուրիչ օշարակ»:

Հավելենք, որ տարաբնույթ ախտահարումների բնորոշման այդ եռաշերտ դիտարկումները հիմնականում առկա են նաև բժշկարանի այլ գլուխներում:

Շարունակելով Ամիրդովլաթի բժշկարանում էգիսնացուց ներառված քաղումների վերաբերյալ մեր դիտարկումները՝ բերենք ստամոքսի արյունահոսությունների ախտածագմանն ու թարեպիային վերաբերող ավելի քան ուշագրավ հետևյալ հղումը.

Ախտածագում (պատճառ). «Ֆօլսսն ասէ, թէ լինի ի սուր խառնուածոց, որ ստամոքին երակն ճղփի և կամ զախմ հասնի մարդուն, կամ ի բարձր տեղաց ընկնի» – «պատճառ. Պողոսն ասում է, թե լինում է սուր խառնվածքից, երբ ստամոքսի երակը ճեղքվում է, կամ մարդուն հարված է հասցվում, կամ բարձր տեղից ընկնում է»,

Ախտանիշագիտություն (նշան). «Նշան սուր խառնուածոց լինի, որ գիտենայ, թէ ստամոքն իրֆ խածնէ, որ երկնին լիութենէ է, անոր արիւն Ա. հեղ գայ, ի զախմէ ալ կու լինի» – «Սուր խառնվածքից առաջացած նշանն այն է, որ թվում է, թե ստամոքսն ինչ-որ բան խայթում է, որը լինում է երակների լցվածությունից: Սրա արյունը մեկ անգամ է գալիս: Լինում է նաև հարվածից»:

Թերապիա (ստամոքս). «Ֆօլսսն ասէ, դեղն բասիլիկէն երակ առնեն և տան զայն ըռուպնին, որ զարիւնն կտրէ՝ որպէս աղտորն, ազոխն, սերկեխն և որ նման է սոցա, փրփրեմի ջրով տուր և գառնալեզովի ջրով, տապաշիր, հայ կաւ, սերկեխի ըռուպ, թէ ասով չաջի շատ արիւն գա, տուր դուրս ի քանդուպար խնձորի շարապով և տապաշիրով և անձրեւի ջրով. Ա. կուտ աֆիոն խառնես, գառնալեզվի ջուր և փրփրեմի ջուր ալ խառնէ և տուր»³¹ – «բուժում. Պողոսն ասում է, դեղը բազկի մեծ երակից (բազիլիկ երակից) արյան բացթողումն է, և տալիս են այնպիսի մրգի օշարակ, որը կգազարեցնի արյունը), ինչպես՝ սումախը, խակ խաղողը, սերկեխը և որ սրանց նման են: Անմեռուկի (գանդուռի) ջրով և գառնալեզվի ջրով հնդկեղեգի մոխիր (տուր), հայկական կավ [և] սերկեխի օշարակ. Եթե սրանցով չանցնի և շատ արյուն գա, տուր սաթի դեղահատեր՝ խնձորի օշարակով, հնդկեղեգի մոխրով և անձրեւի ջրով խառնիր մեկ կուտ սև խաշխաշ, նաև գառնալեզվի ջուր, անմեռուկի կամ դանդուռի ջուր խառնիր և տուր»:

³¹ Նույն տեղում, ք. 78բ:

Նմանատիպ վկայակոչում բժշկարանի՝ թոքային հիվանդության «Սիլ որ է թոքին ուռեցն և խոցնա» գլխում էթիոլոգիայի, պաթոգենեզի և թերապիայի բաժիններում:

Ախտաճագում (պատճառ). «Ֆլուսն ասէ, թէ այս ցաւս ի պարսամէն յետև զուգամէն և նուզլայէն իջնու գլուխն հին և երկար հագէն, որ խոչկէն շատ արուն գայ թոքն և կուրցն խոց անէ» – «պատճառ. Պողոսն ասում է, այս ցավը լինում է թոքի այտուցից, թոքաբորբից և հարբուխից հետո, իջնում է գլուխ՝ երկար հագի պատճառով, երբ ըմպանից շատ արյուն է գալիս և թոքն ու կուրծքը խոցոտվում են»:

Ախտանիշագիտություն (նշան). «Ֆլուսն ասէ, թէ այն, որ ջերմն լինի և անձն աւաղ և ըղունկն ծոխ և գինուքին կու հալի, հագայ և արի գայ և թարախ, և ոտվին ուռեց լինի, կերակուր չուզենա սիրտն» – «ախտանշան. Պողոսն ասում է, այն, որ ջերմ է լինում և մարդը՝ հյուծված, և եղունգները ծովում են և հեղուկները հալվում են, [երբ] հագում և՛ արյուն ու թարախ է գալիս, ոտքերն այտուցվում են, և ախորժակ չի ունենում»:

Թերապիա (ստաժում). «Ֆլուսն ասէ, թէ այնոր համար դիժար է, որ թոքն խոցնալն չողջանայ, որ հանապազ փակվի և բացվի որպէս դարբնի փուփ, հով ֆամին ի սիրտն հասցնէ և տաֆն ի դուրս հանէ. թէ այս շարժումն փախ մի խաղի, նա այնժամ սիրտն այրէ զանձն և ցաւն զօրանայ. տուր իշուն կաթն, խաչափարն և ոտվին կտրատէ և լվա ջրով, զարէջրով եփէ և եղկ տուր, որ խմէ, թէ ցաւն երևնա՝ չէ պատեհ, որ լուծես, զի կու վատուծի և կու վնասի»³² – «բուժում. Պողոսն ասում է, այն պատճառով է դժվար, որովհետև խոցը չի առողջանում, որպեսզի ամբողջովին փակվի, և բացվում է ինչպես դարբնի փուփ, սառը քամին սիրտն է հասցնում և տաքությունը դուրս է հանում: Եվ եթե այս շարժումները մի պահ դադարեն, այդ ժամանակ մարդու սիրտը ինքն իրեն կայրի, ցավը կսաստկանա. տուր էջի կաթ, խեցգետնի ոտքերը կտրատիր, ջրով լվա, զարէջրով եփիր և գոլ վիճակում տուր, որ խմի, եթե ցավը երևա, պետք չէ, որ լուծես [բնությունը], որովհետև մարդը կթուլանա և վնաս կկրի»:

Էգինացուն հղմամբ նույնատիպ մեկ այլ մեջբերում. միզային ուղիների հիվանդությունների բաժնում, Ամիրդովլաթը որպես առանձին ախտահարում է դիտում ակամա միզելու երևույթը, որը կարող է կապված լինել միզապարկի սեղմիչի (սֆինկտորի) թուլության հետ:

Ախտաճագում (պատճառ). «Պատճառ. Ֆլուսն ասէ, թէ գինուքնէն լինի, որ բոնողութեան ուժն կամ թուլանայ բշտին միսն, որ բշտին վիզն է, այս լինի» – «պատճառ. Պողոսն ասում է, թե խոնավությունից է լինում, որ միզա-

³² Նույն տեղում, ք. 69բ:

պարկի կծկման ուժը կամ մկանային հյուսվածքը, որ վզիկի շրջանում է, թուլանում է և այսպես է լինում»:

Ախտանիշագիտություն (նշան). «Ֆոլյուն ասէ, ակամայ գոզէ մարդն և կամ զգոզն կաթկթէ, որժամ պահ մի բոնէ և արձակէ, չկարէ բոնել, ի տեղն գոզէ» – «ախտանշան. Պողոսն ասում է, մարդն ակամա միզում է կամ մեզը կաթկթում է, երբ մի պահ [մկանը] կծկվում և թողնում է, չի կարողանում մեզը պահել, և տեղում միզում է»:

Թերապիա (ստածում). «Ֆոլյուն ասէ, թէ այս ցաւ ջրին ճանապարհ կսկիծ լինի, [դեղն] խոլինճանն է, որ ծեծես և մեղրով տաս, օգտէ. և քիչ մի պախրու եղ խառնէ և տուր քանի մի ընկուզ և մայի փոխտայ խմէ, ի վերայ եղի ջուր՝ օգտէ: Քամոն և դանդարիոն Ա. Ա. բաժին ծեծես և տաս Բ. դրամ եղի ջրով օգտէ, թէ Ե. դրամ պալուտ և Բ. դրամ խունկ և Գ. դրամ մահլապ մաղէ և տուր ժմուն Բ. դրամ և թէ պալիլան, հալիլա, ամլան տա՛մ տապակած լինի պախրու եղով՝ Ա. Ա. դրամ, պալուտ՝ Բ. դրամ, խունկ, սօտ, չոր գուլի՝ Դ. Դ. դրամ, մուռ կէս դրամ մաղէ, տուր ժմուն Գ. դրամ. այս դեղս շատ օգտէ գոգողին»³³ – «բուժում. Պողոսն ասում է, այս հիվանդության ժամանակ մեզի ճանապարհը մրմռում է: Դեղը՝ խոլնջանն է, որ պիտի ծեծես և մեղրով տաս, օգնում է: Խառնիր հինգ դրամ տավարի յուղ և տուր մի քանի ընկուզ, և եփած խաղողի ջուր թող խմի, վրայից էլ՝ գոլ ջուր, օգնում է: Չաման և տերեփուկ մեկ-մեկ բաժին ծեծիր և տուր երկու դրամ գոլ ջրով, օգնում է: Թե՛ հինգ դրամ խոզակաղին, երկու դրամ խունկ, երեք դրամ կեռաս տուր ժամը երկու դրամ, և թե՛ հալիլա, ամլաճ, պալիլաճ՝ տավարի յուղով տապակած՝ մեկ-մեկ դրամ, խոզակաղին՝ երկու դրամ, խունկ, կիպեառիս, չոր խեժ չորս-չորս դրամ, զմուռ՝ կես դրամ մաղիր, տուր ժամը երեք դրամ. այս դեղը շատ է օգնում ակամա միզողին»:

Առաջարկվող դեղապատրաստուկը փաստորեն ամրացնում է միզապարկի վզիկի սեղմիչը (սֆինկտորը) և հիվանդին ազատագրում ակամա միզարձակության անցանկալի երևույթից: Միզապարկի բորբոքումների բուժման ժամանակ, ըստ Ամիրգովլաթի՝ էգինացին առաջին անգամ կիրառում է կաթետերի միջոցով դեղապատրաստուկների ներարկումը միզապարկ, թերապևտիկ մի տարբերակ, որ այսօր էլ կիրառվում է բժշկության մեջ:

Եվ իհարկե հիշատակելի է տենդային՝ հյուծող կամ «հալւմաշ» տենդի (*febris hectica*) ախտահարման պատճառագիտության ու թերապիային վերաբերող՝ էգինացուց փոխառված նկարագրությունը.

Ախտաճագում (պատճառ). «Ֆոլյուն ասէ, թէ ի աւելի տափութենէ լինի և ի տափ արընէ, որ ի անձն աւելնայ այն պատճառէ, որ ի ժմուն երակ առնեն և արին ի անձն աւելնայ և այս ջերմս ընծայի» – «պատճառ. Պողոսն ասում է,

³³ Նույն տեղում, ք. 95բ:

լինում է ավելորդ տաքությունից և տաք արյունից, որ ավելանում է մարդու մոտ այն պատճառով, որ ժամանակին արյուն բաց [չեն] թողնում. արյունն ավելանում է և առաջանում է այս ջերմը»:

Թերապիա (ստաժում). «Ֆլուսն ասէ, թէ հով տեղ նիստ. պապունան, մանուշակ, վարդ, նոնոֆար եփէ ջրով և ջուրն լնուս վերայ գլխուն և օժէ գլուխն ամենայն հով և գէն ձիթերով և պաղ տեղ պառկի, որ ուռու տերև կենայ ի շորեք դիհն և տաս հով և գէն կերակուր և լուծէ մրգաջրով թրանկուպին, մանուշակ տուր, խաղաչ արէ հապի սապոռով, մշտով և դաֆաթի հապով, թէ փորն լուծ լինի սրբննային, նուան հատ, սերկևիլի ըռուպ, մրգաջուր. և թէ ծարաւ լինի, տուր փրփրեմի, դրմի կուտ սրբննայնով, յետոյ գարէջուր, ազոխի մուզավարայ տուր»³⁴ – «բուժում. Պողոսն ասում է, թե՛ հով տեղ նստացրու. երիցուկ, մանուշակ, վարդ, նունուֆար եփիր ջրով և ջուրը լցրու գլխին կամ օժիր գլուխը ամեն տեսակ հով և խոնավ յուղերով, սառը տեղ թող պառկի, որ շորս կողմը ուռենու տերև դրված լինի, տուր հով և խոնավ կերակուր, մրգաջրով լուծիր գազպեն, մանուշակ և տուր: Ողողում արա հալվեի հաբով, աշկահոտ հայկտուցի և երեսնակի հաբով: Եթե փորլուծություն ունենա՝ մեղրով և քացախով պատրաստված օշարակ [տուր], նուան հատիկ, սերկևիլի օշարակ, մրգաջուր, և եթե ծարավ լինի, տուր անմեռուկի (կամ դանդուռի) [և] դգմի կորիզ՝ մեղրով և քացախով, հետո՝ գարեջուր, [և] խակ խաղողով ջրալի կերակուր»:

Այստեղ գործում է հիպոկրատյան հեղահյուսթային ախտաբանության տեսությունը. ըստ դրա՝ տենդի առաջացման պատճառի վերաբերյալ միջնադարում գերիշխող այն տեսակետն էր, որ, երբ անոթներում տեղի են ունենում արյան նեխային պրոցեսներ, բուժումը պիտի կազմակերպվի հիպոկրատյան՝ հակառակը հակառակի (contraria contrariis) սկզբունքով: Պողոս էգիսացու անունը պարունակող այս հատվածի քննությունը մեզ բերեց այն համոզման, որ դա փաստորեն 2 դարի բյուզանդական հանրահայտ բժիշկ Ալեքսանդր Տրալացու Libri doudecim de arte medica «Հավաքածու»-ի 12-րդ հատորում ներառված³⁵ հյուծող տենդերի՝ Տրալացու առաջարկած բուժաձևի կրկնությունն է. կիրառել կանխապես հովացնող, սառը թրջոցներ, թարմ, կազդուրիչ սնունդ և մրգահյութեր, նույն դեղաբույսերը և նույն խորհուրդը՝ հիվանդի կողքերին լցնել թարմ, կանաչ տերևներ, տալ չափավոր քանակությամբ գինի³⁶:

³⁴ Նույն տեղում, ք. 122բ, 123ա:

³⁵ Տենդային հիվանդություններին նվիրված այս հատորում Ալեքսանդր Տրալացին բնութային է առնում մեկօրյա, երեքօրյա, հաճօրյա, նոպայաձև կրկնվող և հյուծող տենդերը՝ ըստ հիպոկրատյան հեղա-հյուսթային ախտաբանության տեսության, չբացատրելով մասնավորապես, թերևսման, գերհոգնածության և ծանր ընթացքով խրոնիկական հիվանդությունների գործոնները (С. Ковнер, *История средневековой медицины*, с. 71):

³⁶ Նույն տեղում, էջ 73:

Ընդհանրացնենք՝ Ամիրգովլաթի բժշկարանում Պողոս էգինացու անունով հիշատակված տարաբնույթ հատվածները, փաստորեն միջնորդավորված՝ ի վերջո սերում են նրա յոթհատորյա «Հավաքածու»-ից, մասնավորապես 2-րդ, 3-րդ, 4-րդ գրքերից, որտեղ քննարկվում են սիրտ-թոքային, աղեստամոքսային և միզասեռական համակարգի տարբեր ախտահարումների էթիոլոգիային, կլինիկային և թերապիային վերաբերող հարցեր:

Ուզում ենք առանձնակի նշել Ամիրգովլաթ Ամասիացու և բյուզանդական բժշկության փոխազդեցություններին ուղեկցող և, ընդհանրապես, թե՛ վաղ, թե՛ ուշ միջնադարում բժշկական կենցաղին հատուկ մի իրողություն: Խոսքը վերը հպանցիկ հիշատակված «պերիոդետ» կամ «շրջիկ» բժիշկ երևույթի մասին է: Հայ միջնադարում (և ոչ միայն) հանդիպող «շրջիկ» բժիշկների հանգամանակի քննություն պահանջող այս երևույթը չափազանց հետաքրքիր իրողություն է, որին մտադիր ենք անդրադառնալ հետագայում:

Ովքե՞ր էին «շրջիկ» բժիշկները: Բժիշկների այդօրինակ գործելաոճը հայտնի է դեռևս վաղնջական ժամանակներից: Օրինակ՝ Հիպոկրատեսն իր իսկ վկայությամբ, որպես «շրջիկ» բժիշկ ճանապարհորդել է Փոքր Ասիայի երկրներով, հասել է սկյուլթների երկիր³⁷, հնարավոր է, եղել է եգիպտոսում³⁸, ծանոթացել տեղի ժողովրդական բժշկության ավանդույթներին, յուրացրել դրանք, դարձրել կիրառելի իր բժշկական պրակտիկայում:

Բժշկական առնչումների այս ավանդույթը շարունակվել է նաև բյուզանդական բժշկության մեջ, իրենց իսկ վկայությամբ «պերիոդետ» բժիշկներ են եղել Ալեքսանդր Տրալացին ու հենց ինքը՝ Պողոս էգինացին: Այս երևույթն առավել տարածված է եղել արաբական բժշկության մեջ՝ ի դեմս հանրազետ իմաստասեր Բիրունու և այլոց:

Միջնադարյան հայ բժշկության մեջ «պերիոդետ» բժիշկներ էին Ամիրգովլաթ Ամասիացի բժշկապետը, սեբաստահայ բժիշկներ Ասար և Բունիաթ Սեբաստացիները: Ահա իր իսկ Ամիրգովլաթի վկայությունն այդ մասին. «... և ի յերկրէ ի յերկիր շատ զբժշկութեան զարուեստն էի գործել և փորձել էի ես իմ միտքն շատ դեղեր ու թաւրիպնի»³⁹:

Տեղեկությունների փոխանակման այլ միջոցների բացակայության պայմաններում սա իրոք միջնադարյան բժշկական ազդեցությունների կարևոր միջոցներից մեկն էր, եթե ոչ ամենակարևորը:

³⁷ Սկյութներին և նրանց սովորույթներին բազմաթիվ անդադարձներ կան Հիպոկրատեսի De aëre aquis et locis («Պղի, ջրերի և վայրերի մասին») երկում:

³⁸ С. Ковнер, *Очерки истории медицины*, Гиппократ, Киев, 1883, сс. 197-198.

³⁹ ՄՄ 414, ք. 221ա:

Միջնադարյան հայ-բյուզանդական բժշկագիտության փոխհարաբերությունների քննությունն ուղղագծում է, որ մի կողմից այդ ազդեցությունն իրողություն է դառնում միջնորդավորված ձևով (բյուզանդական բժշկագիտության միջոցով հիպոկրատյան բժշկական ավանդույթների փոխառումը), իսկ մյուս կողմից այս առնչությունների արդյունքում ազդեցություն կրող կողմի ժառանգությունն է ծառայում փոխատու կողմի ժառանգության սկզբնաղբյուր (խոսքն Ամիրդովլավի մեջբերումների շնորհիվ բյուզանդական բժիշկների որոշ անհայտ գործերի աղբյուրագիտական ճշգրտումների մասին է), երրորդ դեպքում էլ վերոնշյալ «շրջիկ» բժիշկների առկայությունն է զուգահեռ գտնում տարբեր իրականություններում:

Այսուհանդերձ, միջնադարյան գիտամշակութային ի մասնավորի բժշկագիտական փոխազդեցության ձևերն իրենց ամենատարբեր շերտերով իրականում շատ ավելի բազմազան են, և մեր քննությամբ ներկայացվող այդ ձևերի խմբավորում-մոդելավորումը անշուշտ ի հայտ է բերում այդ փոխազդեցությունների մասնավոր՝ զուտ մեր նկատած տարբերակները:

Ամփոփուհենք. տարբեր բժշկագիտական բնագրերի մեր վերոբերյալ քննությունը համարում ենք զուտ նախնական քայլ՝ միտված հետագա ուսումնասիրման հեռանկարները նախանշելուն:

DONARA KARAPETYAN

ECHOES OF BYZANTINE MEDICINE IN AMIRDOVLAT' AMASIATS'I'S WORK *THE BENEFITS OF MEDICINE*

Keywords: Medieval Armenian medicine, medical connections, Byzantine medicine, *The Benefits of Medicine*, Oribasius, Paul of Aegina, periodeut physicians.

The article examines Armenian-Byzantine medieval connections in the field of medical science, as well as direct borrowings. It examines the actual paths of these interactions both in the field of applied medicine (pathogenesis, symptomatology, therapy) and from the point of view of general principles of medical science.

It analyzes the echoes of medical ideas and borrowings from the treatises of the famous Byzantine physicians of the 4th-7th centuries, Oribasius, Alexander of Tralles, and Paul of Aegina in the work *The Benefits of Medicine* by the 15th-century Armenian physician and encyclopedic scholar Amirdovlat' of Amasya, who mentions them by name. It is evident that he was familiar with Byzantine sources indirectly, thanks to their Arabic translations, through which the ideas of the ancient

physicians Hippocrates and Galen also found their way into his work. The source comparisons made lead to the conclusion that the excerpts in Amirdovlat's work may contain passages from the lost treatises of the authors mentioned. The Amasian physician was a periodeut physician, as he himself speaks of his travels to different countries, where he practiced the art of healing and also tested (local) medicines.

ДОНАРА КАРАПЕТЯН

**ОТГОЛОСКИ ВИЗАНТИЙСКОЙ МЕДИЦИНЫ В ТРУДЕ
АМИРДОВЛАТА АМАСИАЦИ «ПОЛЬЗА МЕДИЦИНЫ»**

Ключевые слова: Средневековая армянская медицина, медицинские взаимоотношения, византийская медицина, «Польза медицины», Орибазий, Павел Эгинский, врачи «периодевты».

В статье рассматриваются армяно-византийские средневековые взаимоотношения в области медицинской науки, а также прямые заимствования. Рассмотрены пути этих взаимодействий как в области прикладной медицины (патогенез, симптоматика, терапия), так и с точки зрения общих положений медицинской науки.

Проанализированы отголоски медицинских идей и заимствования из трактатов известных византийских врачей IV-VII веков Орибазия, Александра Тралесского и Павла Эгинского в труде «Польза медицины» армянского врача и ученого энциклопедиста XV века Амирдовлата Амасийского, который упоминает их по именам. Очевидно, что он был знаком с византийскими источниками опосредованно, благодаря их арабским переводам, через которые в его труд проникли также идеи античных врачей, Гиппократ и Гален. Проделанные источниковедческие сопоставления приводят к выводу о том, что excerpts в труде Амирдовлата могут содержать отрывки из несохранившихся трактатов упомянутых авторов. Амасийский врач был периодевтом, так как сам говорит о своих путешествиях в разные страны, где он применял искусство врачевания, а также испытывал (местные) лекарства.